ԼՐԱՏՈՒ

ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՆԵՐԻ ԿՈՈՐԴԻՆԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 41-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

Մ/թ. սեպտեմբերի 18—20-ը Երևանում տեղի ունեցավ միութենական հանրապետությունների գիտությունների ակադեմիաների կոորդինացման խորհրդի 41-րդ նստաշրջանը, որի բացմանը ներկա էին ընկ. ընկ. Կ. Ս. Դեմիրճյանը, Ֆ. Տ. Սարգսյանը, Կ. Լ. Դալլամյանը, Լ. Ն. Ներսիսյանը, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալներ Յու. Ե. Խաչամիրյանը, Հ. Ս. Սաղոյանը, ՀԿԿ Կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչ Ա. Պ. Մելքոնյանը:

Նստաշրջանը ներածական խոսքով բացեց ՍՍՀՄ ԳԱ պրեզիդենտ, միութենական հանրապետությունների գիտությունների ակադեմիաների գիտական գործունեության կոորդինացման խորհրդի նախագահ, ակադեմիկոս Ա. Պ. Ալեքսանդրովը: Կոմունիստական կուսակցությունը սովետական գիտնականների առաջ խնդիր է դրել,— ասաց նա,— ստեղծել երկրի ժողովրդական տնտեսության արդյունավետության արմատական բարձրացման գիտական հիմքերը։ Առաջնորդվելով կուսակցության ցուցումներով, մեր գիտնականները զգալի ավանդ են ներդրել պարենային ու էներգետիկ, ինչպես նաև գիտատեխնիկական առաջադիմության կոմպլեքսային ծրագրերի մշակման բնագավառում։ Այժմ մեր գլխավոր խնդիրն է հասնել դրանց շուտափույթ ներդրմանը։ Ա. Պ. Ալեքսանդրովն այնուհետև նկատեց, որ գիտական հիմնարկների և արդյունաբերության համագործակցության նոր ձևեր են ներդրվում այն փուլում, երբ արդեն ստացվել են առաջին արդյունքները, բայց դեռ չկան կիրառական հետևանքներ։ ՍՍՀՄ ԳԱ պրեզիդենտը նշեց, որ մեր երկրի գիտական հիմնարկներն ի վիճակի են լուծելու և լուծել են ամենատարբեր գիտական պրոբլեմներ։ Դրա շնորհիվ մեր երկիրը մի շարք տեխնոլոգիական մշակումների, նյութերի և ապարատների ներմուծման բնագավառում հրաժարվեց արտասահմանյան ֆիրմաների ծառայություններից։

Վերջում Ա. Պ. Ալեքսանդրովը կոնկրետ օրինակներով ցույց տվեց այն բանի անթույլատրելիությունը, երբ արժեքավոր գիտական մշակումների ներդրումն աննեղելիորեն ձգձգվում է, փաստեր բերեց այն մասին, որ գիտական թեմաներն ու մշակումները երբեմն կրկնորդվում են։ Այդ իրողությունը հանգեցնում է նյութական միջոցների և գիտական պոտենցիալի ավելորդ ծախսումների։ Նման երևույթների կանխման նպատակով նա առաջ քաշեց ճյուղային հիմնարկների և ակադեմիաների ինստիտուտների սերտ համագործակցության անհրաժեշտությունը։

Նստաշրջանի մասնակիցներին ողջունեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ֆ. Տ. Սարգսյանը։ Նա նշեց, որ զարգացած սոցիալիզմի կատարելագործումը և գիտատեխնիկական առաջադիմության արագացումը պահանջում են հասուն սոցիալիստական հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման գիտական խոր վերլուծություն և հիմնավորված կանխատեսումների մշակում։ Ուստի միանգամայն հասկանալի է, ընդգծեց նա, թե ինչու խորհրդի այս նստաշրջանում ճշգրիտ գիտությունների պրոբլեմների հետ մեկտեղ նախատեսված է քննարկել նաև մեր զարգացման արդի փուլում հասարակական գիտությունների խնդիրները։ Ֆ. Տ. Սարգսյանը նշեց, որ ՀՍՍՀ ԳԱ դիտական հիմնարկներում կատարվող հետազոտությունները զգալի չափով որոշեցին հանրապետության էկոնոմիկայի հետագա աճի հանգուցային ուղղությունները։ Սակայն գիտատեխնիկական առաջադիմության ապահովման բնագավառում դեռևս բավարար հուսալիությամբ չի գործում գիտության և արտադրության կապի համակարգը, որը երաշխավորում է գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումների արագ ներդրումը պրակտիկայում։

«Սովետական գիտությունը նոր բնագծերում» զեկուցմամբ հանդես եկավ ՍՍՀՄ ԳԱ փոխպրեզիդենտ, ակադեմիկոս Պ. Ն. Ֆեդոսեևը։ Նա մասնավորապես նշեց, որ ՍՄԿԿ Կենտկոմի հունիսյան պլենումում հստակորեն սահմանվեց արդի փուլում գլխավոր ծրագրային խնդիրը՝ զարգացած սոցիալիստական հասարակության պլանաչափ և համակողմանի զարգացումը։ Սովետական էկոնոմիկայի առաջընթաց դինամիկ զարգացումը, կուսակցության սոցիալական քաղաքականության իրականացման հաջողությունները ցուցադրում են սոցիալիզմի՝ որպես այնպիսի կարգերի անվիճելի առավելությունները, որոնք

ապահովում են անշեղ առաջադիմությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում։ Այնուհետև զեկուցողը նշեց, որ մեր երկրի առջև կանգնած խնդիրների լուծման գործում մեծանում է սովետական գիտության, հատկապես ակադեմիական գիտական հիմնարկների դերն ու պատասխանատվությունը։ ՍՄԿԿ Կենտկոմի հունիսյան պլենումից հետո երկրի ակադեմիական գիտական հիմնարկները զգալի աշխատանք են կատարել պլենումի որոշումներն իրականացնելու և թերությունները վերացնելու ուղղությամբ։

ՍՍՀՄ ԳԱ-ն և հանրապետական ակադեմիաները, այնուհետև նկատեց Պ. Ն. Ֆեդոսեևը, մշակել են միջոցառումներ, որոնց խնդիրն է կատարելագործել գիտական հետազոտությունների պլանավորումն ու կազմակերպումը, ճշտել հետազոտությունների պրոբլեմատիկան՝ ուժերն ու միջոցները կենտրոնացնելու այն գլխավոր ուղղություններում, որոնք նպաստում են արտադրության արդյունավետության բարձրացմանը, գիտատեխնիկական առաջադիմության արագացմանը, գաղափարախոսական, մասսայական-քաղաքական աշխատանքի կատարելագործմանը։ Զեկուցողը հանգամանորեն անդրադարձավ հասարակական մի շարք գիտությունների հետագա զարգացման հարցերին, նշելով, որ արդի պայմաններում ՍՍՀՄ գիտատեխնիկական առաջադիմության 1985—2005 թվականների կոմպլեքսային ծրագիրը ելանյութ կծառայի այն կոնկրետ կանխատեսումների համար, որոնք անհրաժեշտ են ՍՄԿԿ ծրագրի նոր խմբագրությամբ արտացոլվող՝ մեր հասարակության զարգացման հեռանկարների որակական բնութագրերի գիտական հիմնավորման համար։ Էական նշանակություն ունեն այնպիսի խոշոր սոցիալ-տնտեսական ծրագրեր, ինչպիսիք են պարենային և էներգետիկ ծրագրերը, որոնք կարտացոլվեն ՍՄԿԿ ծրագրի նոր խմբագրությամբ։

Վերջում Պ. Ն. Ֆեդոսեևն ասաց, որ սովետական գիտնականների արգասավոր գործունեության համար կուսակցությունը ստեղծել է բոլոր պայմանները և միաժամանակ ավելի ու ավելի մեծ պահանջներ է ներկայացնում գիտական աշխատանքի որակին, որպեսզի գիտությունը կուսակցության ու ամբողջ ժողովրդի ավելի ակտիվ ու արդյունավետ օգնականը դառնա զարգացած սոցիալիզմի կատարելագործման և աշխարհի խաղաղության ամրապնդման պատմական խնդիրների լուծման գործում։

ՍՍՀՄ ԳԱ կիրառական մաթեմատիկայի ինստիտուտի դիրեկտորի տեղակալ, ակադեմիկոս Ա. Ա. Սամարսկիին իր ելույթում նշեց, որ մաթեմատիկական մոդելավորման, հաշվողական գիտափորձի լայն ներդրումը դառնում է գիտատեխնիկական առաջադիմության գլխավոր ուղղություն։ Վերջին ժամանակներս մեծացել է հաշվողական տեխնիկայի զարգացման և ծրագրային ապահովման, հաշվողական տեխնիկայի նոր միջոցների ստեղծման և գիտական հետազոտությունների ու ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում դրանց կիրառման տեսության մշակման ասպարեզում կատարվող ֆունդամենտալ և կիրառական գիտական հետազոտությունների հրատապությունը։ Հաշվողական տեխնիկայի ասպարեզում տիրող արդի վիճակի վերլուծությունը,— ասաց նա,— վկայում է, որ ֆունդամենտալ հետազոտությունների հիմնական ուղղությունն այն աշխատանքներն են, որոնք ապահովում են առավելապես գերբարձր արտադրողականությամբ էլեկտրոնային հաշվիչ մեքենաների, միկրոպրոցեսային տեխնիկայի, անհատական կոմպյուտերների, ռոբոտատեխնիկայի ու ճկուն արտադրությունների և դրանց ծրագրային ապահովման հետ կապված հաշվողական տեխնիկայի միջոցների ստեղծումը։ Նա ընդգծեց, որ հաշվողական տեխնիկայի արդիական միջոցների ստեղծման պրոբլեմների հաջող լուծման համար անհրաժեշտ են բազմապլան հետազոտություններ։

ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը նստաշրջանի մասնակիցներին ծանոթացրեց տիեզերքում ոչ ստացիոնար երևույթների հետազոտությունների և ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայում ու հանրապետությունների ԳԱ-ներում այդ աշխատանքների կոորդինացման հետ։ Զեկուցողն ասաց, որ ժամանակակից աստղաֆիզիկայում ոչ ստացիոնար երևույթների հետազոտությունները հսկայական նշանակություն են ձեռք բերել։ Դրանք ընդգրկում են աստղաֆիզիկայի նորանոր բնագավառներ, դրանք նորագույն մեթոդների կիրառման առավել արգասավոր ասպարեզ են՝ ներառյալ ռադիոաստղագիտությունը, ռենտգենյան աստղագիտությունը և այլն։ Այդ պրոբլեմի գծով կարևոր շատ գաղափարներ ծագել են ՍՍՀՄ-ում, որտեղ կատարվել են նաև աստղագիտության տարբեր բաժիններին վերաբերող զգալի հայտնագործություններ։ Այնուհետև Վ. Հ. Համբարձումյանը նշեց, որ հետազոտությունների ծավալը, երբեմն էլ գիտական խորությունը, որոնք դիտողական արվեստ և մեծ զգայնություն ու անկյունային բարձր լուծելիություն ունեցող ապարատներ են պահանջում, դեռ անբավարար են, դանդաղ են ընթանում մեծ ինդերֆերոմետրիկ ռադիոաստղագիտական ցանցի կազմակերպման աշխատանքները։ Աստղագիտական հիմնարկների ղեկավարները միշտ չէ, որ անհրաժեշտ հաստատակամություն են ցուցաբերում սովետական հեռադիտակներն այդպիսի ապարատներով հա-

գեցնելու գործում, ինչպես նաև քիչ ուշադրություն են դարձնում նոր, ավելի կատարյալ սարքերի ստեղծմանը։

Կոորդինացման խորհրդի նախորդ նստաշրջանների որոշումների կատարման ընթացքի մասին ինֆորմացիայով հանդես եկավ կոորդինացիոն խորհրդի նախագահի տեղակալ Ն. Ս. Պշիրկովը։ Նրա ելույթում բերվեցին գիտությունների ակադեմիաների, ՍՍՀՄ ԳԱ գիտական կենտրոնների և մասնաճյուղերի կոորդինացնող դերի ուժեղացման առավել բնորոշ օրինակներ։ Ն. Ս. Պշիրկովը նշեց եզակի ու թանկարժեք գիտական սարքավորումների կոլեկտիվ օգտագործման գիտական կենտրոնների ստեղծման, արտադրական կազմակերպությունների, համապատասխան մինիստրությունների ու գերատեսչությունների հաշվին միութենական հանրապետությունների գիտությունների ակադեմիաների, ՍՍՀՄ ԳԱ գիտական կենտրոնների ու մասնաճյուղերի համար փորձնա-փորձառական միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը։

Նստաշրջանի ընթացքում նրա մասնակիցները ծանոթացան ՀՍՍՀ ԳԱ ինստիտուտների և հանրապետության այլ գիտական հիմնարկների աշխատանքներին, այցելեցին ՀՍՍՀ ագրոարդյունաբերական կոմպլեքսի և արդյունաբերության ձեռնարկությունները, հանդիպումներ ունեցան արտադրական, գիտական կազմակերպությունների և ուսումնական հաստատությունների կոլեկտիվների հետ, եղան մի շարք շրջաններում, որտեղ հանդիպեցին ձեռնարկությունների բանվորների և ինժեներատեխնիկական աշխատողների հետ։

Նստաշրջանի օրերին Երևանի Ստ. Շահումյանի անվան պալատում բացվել էր «Վրացական ՍՍՀ, Ադրբեջանական ՍՍՀ և Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիաների նվաճումները» ցուցահանդեսը, որին մասնակցում էին Վրացական ՍՍՀ՝ 42, Ադրբեջանական ՍՍՀ՝ 30 և Հայկական ՍՍՀ՝ 33 գիտական հիմնարկներ։ Ցուցահանդեսում մեծ տեղ էր տրված նաև Անդրկովկասի եղբայրական հանրապետությունների պատմությանը և մշակույթին նվիրված նյութերին։